արք, խափանել զայն և նորոգել զՀայոցն, և փութացուցանել նախ քան զՊասեքն. գրեաց առանձին առ Սեղբոս և Մելիտոն Ամիրայս լինել ձեռնտու գործոյն, Դեկտեմբեր 13։ Ի հասանիլ գրոց Գրիգորի 'ի Կոստանդինուպօլիս առ Յովհաննէս Պատրիարք, մատոյց գիր ամբաստանութեան առ Արքայ բազմութեամբ եկեղեցականաց և գլխաւորաց ազգին, յորում գանգատէր զանիրաւութենէ ազգին Յունաց, զորոյ զհամառօտ միտս դիցուք աստանօր։

Դաշնագիրք Օմարայ, Ալիայ և Մէլիք Սալահատտինի և փուերեալ Թուղթք դատարանի, յորս բացայայտ երեւին նախնի պայմանադրութիւնք Հայոց, և թէ Հաբէշք, Ղպթիք և Ասորիք հետեւակ են նոցա. և զայս իրաւունս ոչ ոք յօտարաց բռնաբարեաց. և 'ի գահակալութեան նորին Արքայի, նորոգեցան այսոքիկ հաստատեալ Կայսերական հրովարտակաւ։ Սակայն Յոյնք ոչ շատացեալ հետեւակաց իւրեանց, որք են Վիրք, Սըրպք և Ռուսք՝ ստութեամբ և հնարիւք առին հրովարտակ 'ի Կայսերական յատենէ, յափշտակել զհետեւակս մեր. տեսեալ թէ հակառակ է այն նախնի պայմանադրութեանց, պահեցին, բաւական համարելով զարձանագրութիւն նորին 'ի Դուան, եւ 'ի դէպ ժամանակի 'ի գործ դիցեն զայն իբրեւ հնացեալ, որպէս այժմ ետուն նորոգել. նոյնպէս և զհրովարտակն վասն հանդիսի լուսաւորութեան, որոյ վէճն լուծեալ էր յառաջագոյն քննութեամբ և հանրագրութեամբ այլազգեաց Երուսաղէմի. այժմ հակառակ այսմ, դարձեալ առին հրովարտակ, որով սպառնան հասուցանել մեզ չարիս յափշտակել զհետեւակս մեր և արկանել զնոսա ընդ իշխանութեամբ Պատրիարքի իւրեանց. թէպէտեւ այս անկարելի, սակայն զկնի ժամանակաց լինի առիթ խռովութեանց եւ ատելութեանց. ուստի խնդրեմք ակնարկել յառաջին պայմանադրութիւնս և 'ի հրովարտակս մեր, և այնպէս լուծանել զխնդիրն։

Եւ ըստ հրամանի Արքային՝ քննեցան գրեանք Հայոց, որք են. Դաշնագիր Ալիի, գրեալ յԵրուսաղէմ 'ի վանս Ս. Յակոբայ (٤٠). հրովարտակ Սէլիմայ առաջնոյ (٩٢٣). Սիւլէյմանայ (٩٢٧) գիր դատարանի Հէօճճէթ (٩٦٣), յորում դատաստանք Հայ եւ Յոյն Պատրիարքաց յատենի